«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Խոսքի մասերի ուսուցումը և տարբերակումը*

Ուսուցիչ՝ *Կոտայքի մարզի Սևաբերդի միջնակարգ դպրոց*
Ասատրյան Ջուլետա Թորգոմի

Խումբ՝ *Երկրորդ*

Վերապատրաստող՝ *Սողոմոնյան Արամ*

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… …….3

Խոսքի մասերի ուսուցման արդի հիմնահարցերը……..5

Խոսքի մասերի ուսուցման և տարբերակման արդյունավետ ուղիներ……8

Եզրակացություններ և առաջարկություններ……..16

Օգտագործված գրականության ցանկ……...17

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Ձևաբանությունը մայրենիի ու հայոց լեզվի դասընթացի ավանդական բաժինն է: Ինչպես հայոց լեզվի բոլոր բաժինների, այնպես էլ ձևաբանության ուսուցումը խիստ կարևոր է կրթության բոլոր աստիճաններում, որը պետք է իրականացվի քերականական գիտելիքների ուսուցման շարունակականության ապահովմամբ: Խոսքի մասերի ուսուցման, դրանք խոսքում տարբերակելու կարողությունների ձևավորման խնդիրը մշտապես արդիական է: Խոսքի մասերի վերաբերյալ հիմնարար գիտելիքների օգնությամբ սովորողը կարողանում է լիարժեքորեն պատկերացնել, թե բառը խոսքի մեջ ինչ դեր ունի, քերականական ինչ հատկանիշներով է օժտված, թե այդ քերականական հատկանիշներն ինչպես են գործառում բանավոր ու գրավոր խոսքում, թե նախադասության մեջ ինչ պաշտոն է կատարում այս կամ այն խոսքի մասը և այլ հիմնահարցեր:

Ձևաբանության ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ ուղղագրական և կետադրական հմտությունների, շարահյուսական և ոճական վերլուծությունների հաջող զարգացումը մեծապես կախված է խոսքի մասերը և դրանց բնորոշ ձևաբանական առանձնահատկությունները ճշգրիտ ճանաչելու, խոսքի մասերը տարբերակելու կարողությունից:

Խոսքի մասերը ճանաչելու և դրանք տարբերելու կարողությունը կարևոր է նաև կետադրական մի շարք կանոններ կիրառելիս: Ձևաբանությունը և շարահյուսությունը սերտորեն կապված են: Ձևաբանության ուսումնասիրման գործընթացում դպրոցականները ոչ միայն սովորում են խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները, այլև՝ թե ինչ շարահյուսական գործառույթ են կատարում խոսքի այս կամ այն մասին պատկանող բառերը:

Ձևաբանության իմացությունը, մասնավորապես՝ խոսքի մասերի տարբերակումը մեծ նշանակություն ունի դպրոցականների՝ կապակցված խոսք կառուցելու ուսուցման գործընթացում: Այստեղ հիմնական ուշադրություն է դարձվում, թե խոսքի որ մասերն են առավել բնորոշ խոսքի որոշակի ոճին և ժանրին:

Այսպիսով, խոսքի մասերի ուսուցումը, դրանք տարբերելու ունակությունը գործնական նշանակություն ունի, որով հիմնավորվում է հետազոտական աշխատանքի կարևորությունը:

Աշխատանքի նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել խոսքի մասերի ուսուցման և տարբերակման հիմնահարցը:

Աշխատանքի խնդիրները: Հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել և վերլուծել հիմնահարցի վերաբերյալ տեսական գրականություն,
2. պարզել խոսքի մասերի ուսուցման և տարբերակման խնդիրները,
3. վերհանել խոսքի մասերի ուսուցման և տարբերակման արդյունավետ ուղիներ:

Խոսքի մասերի ուսուցման արդի հիմնահարցերը

Ձևաբանության ուսումնասիրման առանցքում խոսքի մասերն են, դրանց ուսուցումը և տարբերակումը: Կենտրոնական հասկացությունը բառն է՝ որպես խոսքի մաս: «Ձևաբանություն» բաժնի բովանդակությունը հիմնականում նույնն է ուսումնական և մեթոդական ձեռնարկներում, դասագրքերում: Երեխան պետք է

կարողանա երեք առումներով բնութագրել խոսքի ցանկացած մաս՝ ընդհանուր իմաստ, ձևաբանական առանձնահատկություններ, շարահյուսական դեր:

Դեռևս տարրական ասարաններում կրտսեր դպրոցականներին տրվում են նախագիտելիքներ խոսքի մասերի վերաբերյալ, նրանք սովորում են, որ առարկա ցույց տվող բառերը պատասխանում են **ի՞նչ, ինչե՞ր** հարցերին, անձ ցույց տվողները՝ **ո՞վ, ովքե՞ր** հարցերին, կամ՝ հատկանիշ ցույց տվողները՝ ինչպիսի՞, ո՞ր, որպիսի՛ հարցերին և այլն: Խոսքի մասերի ուսումնասիրությունը պետք է հիմնվի խոսքի այս կամ այն մասին պատկանող բառերի՝ որպես քերականական միավորների ընդհանրությունները, նմանություններն ու տարբերությունները մատնանշելը: Իսկ դրանք հնարավոր է նկատել և ընկալել միայն իրար հետ համեմատելով: Այդ իսկ պատճառով խոսքի մասերի ուսումնասիրումը նպատակահարմար և արդյունավետ կարող է լինել, եթե կազմակերպվի ոչ թե առանձին-առանձին, այլ փոխկապակցված:

Համատեղելի է գոյականի, բայի և ածականի ուսումնասիրումը: Դեռևս լեզվական գիտելիքների ուսուցման նախապատրաստական փուլում այսպիսի մոտեցման շնորհիվ բարենպաստ պայմաններ են ստեղծվում խոսքի մասերի համեմատության, նրանց հիմնական հատկանիշների ընկալման համար: Այս խոսքի մասերի վերաբերյալ ընդհանուր ծանոթություն տալու նպատակով երեխաներին առաջարկվում է խառը բառախումբ, հանձնարարվում է հարցերի միջոցով դրանք առանձնացնել և սյունակներով գրել ըստ նրանց նախապես հայտնի՝ առարկա, գործողություն և առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի: Առաջադրանքը կատարելիս աշակերտներին օգնում են այն հարցերը, որոնք տրվում են նշված խոսքի մասերին: Այս վարժության ընթացքում երեխաները եզրահանգում են, որ մեր խոսքում օգտագործվող բառերը ցույց են տալիս առարկա, գործողություն և հատկանիշ, որ նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն տրվող որոշակի հարց, և բառերը խոսքում օգտագործելիս որոշակի փոփոխություն են կրում[1]:

Այս բաժինն ուսումնասիրելիս դպրոցականները սովորաբար բախվում են մի շարք դժվարությունների: Գոյականն ուսումնասիրելիս երեխաները առաջին անգամ սովորում են, որ գոյականը նշանակում է ոչ միայն անձ, իր, առարկա, այլև առարկայացված հասկացություն (հատկանիշ՝ որպես առարկա, գործողություն՝ որպես առարկա): Այս հարցին պետք է հատուկ ուշադրություն դարձնել և ընդգծել, որ խոսքի մասի տարբերակման հարցում չի կարելի առաջնորդվել միայն հարցով կամ իմաստով: Գոյականի շարահյուսական գործառույթները սովորելիս, դպրոցականների համար

[1] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկան, Երևան, 2018, 344 էջ:

նորություն է այն, որ գոյականը բացի ենթակա և լրացում լինելուց, նախադասության մեջ կարող է նաև լինել ստորոգյալի կազմում որպես ստորոգելիական վերադիր:

Ածականի շարահյուսական գործառության ուսումնասիրելիս դպրոցականները հեշտությամբ ճանաչում են այն որոշիչի դերում, բայց դժվարանում են, երբ ածականը ծառայում է որպես ստորոգելիական վերադիր:

«Թվական անուն» թեման յուրահատուկ է: Դա դրսևորվում է նրանով, որ թվերը շատ հազվադեպ են օգտագործվում խոսքում, բացառությամբ որոշ բիզնես փաստաթղթերի և պաշտոնական հաղորդագրությունների: Թվերի դերը նախադասության մեջ առանձնահատուկ է. դրանք գործածվում են միայն գոյականների հետ: Հայերենում կան բառեր, որոնց նշանակությունը կապված է թվի, քանակի հասկացության հետ: Բայց ոչ բոլորն են վերաբերում թվային անվանմանը: Ուսուցչի խնդիրն է՝ սովորեցնել, թե ինչպես կարելի է տարբերակել այս բառերը թվականներից: Թվերն առանձնահատուկ դժվարություն են առաջացնում բանավոր խոսքում օգտագործելու դեպքում: Գրավոր խոսքում թվերն օգտագործվում են գործնական, մաթեմաիկական և նմանատիպ գրություններում, ուստի դասի ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել համաձայնությանը՝ դրանք գոյականների հետ օգտագործելիս[2]:

Բոլոր ուսումնական կենտրոններում «Դերանուն» թեման առաջին անգամ ուսումնասիրվում է վեցերորդ դասարանում: Դժվարություններ են առաջանում դերանունների կատեգորիաները տարբերելու և դրանց սկզբնական ձևը որոշելիս:

Աշակերտները շատ քիչ են գիտակցում տեքստում դերանունների շարահյուսական դերը: Դերանունների շարահյուսական դերը որոշվում է նրանով, թե խոսքի որ մասին է փոխարինում դերանունը: Կարևոր է երեխաներին սովորեցնել դերանունները կապել խոսքի այլ մասերի հետ: Երեխաները դժվարությամբ են սովորում դերանունների շարքերը: Նրանք սկզբում ճանաչում են և գիտեն միայն անձնական դերանունները, հետևաբար դերանունների ուսուցման առաջին դասին պետք է թվարկվեն դերանունների բոլոր կարգերը՝ յուրաքանչյուր կարգի համար օրինակներով:

Բայի ձևաբանական առանձնահատկություններին ծանոթանալիս հիմնական դժվարությունը կապված է սեռի քերականական կարգի ուսումնասիրության հետ:

[2] Аничкина Н.В. Актуальные вопросы изучения частей речи в школе. Русский язык и литература в мультикультурном пространстве. Комсомольск-на-Амуре. Том часть 2. 2017, с. 129.

Տարրական դպրոցի և 5-րդ դասարանի աշակերտները խոսքի մասերի տարբերակման հետ մեկտեղ՝ մեծ դժվարություններ են ունենում ձևաբանական վերլուծություն կատարելիս (դժվարանում են որոշել սկզբնական ձևը, սեռը, հոլովումը, հոլովը, թիվը, դեմքը, խոնարհումը): Սովորողների մեծամասնությունը դժվարանում է հասկանալ խոսքի առանձին մասերի իմաստաբանությունը. տեքստում խոսքի մասեր գտնելու համար շատերը չգիտեն, թե ինչպես ճիշտ հարց տալ, դժվարանում են որոշել ածականների և մակբայների քերականական տարբերությունները, երբ դրանք բայի լրացում են:

Հայտնաբերված դժվարությունները կշտկվեն

1) եթե սովորողները ճիշտ հասկանան խոսքի մասերը՝ որպես բառերի բառապաշարային և քերականական դասեր, որոնք նույն կերպ են գործառում խոսքում (ըստ նույն մոդելի),

2) եթե ձևաբանական վերլուծությունն իրականացվում է կրթության երկու տարրական և միջին մակարդակներում՝ նույն սխեմայով[3]:

Խոսքի մասերի ուսուցման և տարբերակման արդյունավետ ուղիներ

Խոսքի մասերի ուսուցման և տարբերակման դժվարությունների հաղթահարմանն ուղղված աշխատանքը պետք է լինի գործնական բնույթի, այսինքն՝ ուսուցիչը պետք է ավելի շատ ժամանակ հատկացնի գործնական վարժություններ:

Տարրական և միջին դասարաններում խոսքի մասերի վերաբերյալ քերականական գիտելիքների ուսուցման արդյունավետ գործընթացի համար կարևորվում է կրթական այդ աստիճանների միջև խոսքի մասերի ուսումնասիրության շարունակականության ապահովումը:

Շարունակականության ապահովման պայմանների իրականացման աշխատանքները կարող են ներառել հետևյալ փուլերը.

1) խոսքի հայտնի մասերի քերականական մոդելների կազմում, որպեսզի սովորողները հասկանան խոսքի յուրաքանչյուր մասի գործառույթը լեզվում,

[3]Борисенко И.В., Смекалова Е.Н. Проблема Преемственности между начальной основной школой в изучении темы “Части речи”.Дошкольное и начальное образование: современные методические подходы. Международная конференция «Чтения Ушинского» педагогический факультет ЯГПУ. 2015, с. 217.

2) կրտսեր դպրոցականների պատկերացումների ձևավորում հայոց լեզվի խոսքի մասերի համակարգի և բառերի դասերի (նյութական, ոչ նյութական, ինքնուրույն գործածություն ունեցող և չունեցող, սպասարկու բառեր և այլն) միասնական համակարգում խոսքի առանձին մասերի տեղաբաշխման վերաբերյալ (խոսքի մասերի տարբերակման հիմքն է ձևավորում),



3. Խոսքի մասերի ճիշտ ձևաբանական վերլուծության ուսուցում ձևաբանական վերլուծության հետևյալ ալգորիթմով.

- ✓ հարց ենք տալիս վերլուծվող խոսքի մասի վերաբերյալ,
- ✓ որոշում ենք խոսքի մասը,
- ✓ տվյալ խոսքի մասով արտահայտված բառը դնում ենք սկզբնական ձևով, օրինակ՝ եթե թեք հոլովմամբ դրված բառ է, բերում ենք ելակետային ձևին, կամ եթե խոնարհված բայ է՝ անորոշի ձևին,
- ✓ որոշում ենք վերլուծվող խոսքի մի մասի բոլոր հաստատուն կամ հիմնական քերականական հատկանիշները,
- ✓ որոշում ենք խոսքի տվյալ մասի բոլոր այն հատկանիշները, որոնք բնորոշ են նաև այլ խոսքի մասերին, օրինակ՝ դեմք, թիվ և այլն:
- ✓ կատարում ենք հիմնական քերականական հատկանիշների հենքով համեմատություն համանման հատկանիշներ ունեցող այլ հարաբերակից խոսքի մասերի հետ, օրինակ՝ դա կարելի է իրականացնել Վենի Դիագրամ կամ Մտագրոհ մեթոդներով, երբ ուսուցիչը գրատախտակին գծում է շրջան, որի մեջ գրառում է այն խոսքի մասը, որն ուսումնասիրվում կամ վերլուծվում է, ապա շրջանից դուրս եկող ճառագայթների վրա գրի է առնում աշակերտների հնչեցրած պատասխանները՝ այդ խոսքի մասի

քերականական հատկանիշների, տրվող հարցերի վերաբերյալ: Ապա կատարվում է տրված պատասխանների լրացում, ամփոփում:



- ✓ Վենի Դիագրամ մեթոդով ուսուցիչը գծում է երկու հատվող շրջան, շրջաններում գրի է առնում համեմատվող խոսքի մասերը՝ բնորոշ հատկանիշներով, իսկ հատման կետում՝ դրանց ընդհանուր հատկանիշները: Այս կերպ աշակերտներին տեսանելի են դառնում համեմատվող խոսքի մասերի հիմնական տարբերակիչ քերականական հատկանիշները, որոնք հիմնական ուղենիշ են տվյալ խոսքի մասն այլ հարաբերակից խոսքի մասերից տարբերակելու հարցում:

Նկարագրենք խոսքերի մասերի ուսուցումը մի քանի խոսքի մասի օրինակով:

Գոյական անուն թեմայի ուսումնասիրումը հենվում է առարկա ցույց տվող բառերի մասին երեխաների ունեցած պատկերացումների և նախագիտելիքների վրա, որոնք յուրացրել էին դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում (ո՞վ, ի՞նչ հարցերի միջոցով նրանք որոշում էին առարկա ցույց տվող բառերը և այդպես էլ անվանում էին): Դեռևս տարրական դասարաններում աշակերտները ծանոթանում են գոյականին, նրա հիմնական քերականական հատկանիշներին՝ թիվ, առում, հոլով: Խոսքի մասերի ուսուցման գործընթացում ուսուցիչը պետք է հենվի ինչպես երեխաների արդեն ունեցած գիտելիքների, այնպես էլ ուսուցանվող խոսքի մասի հիմնական քերականական հատկանիշների վերհանման վրա և դրանք ավելի խորացնի: Նրանք արդեն գիտեն, որ գոյականը պատասխանում է ո՞վ/ովքե՞ր, ի՞նչ/ինչե՞ր հարցերին, լինում է հատուկ և հասարակ և այլն: Թվի քերականական կարգի մասին սովորողներին ուսուցիչը պարզաբանում է, որ գոյականները կարող են լինել ինչպես մեկը և երկուսից ավելի՝ եզակի ու հոգբնակի, այնպես էլ՝ հաշվելի և անհաշվելի, ապա բերվում են օրինակներ և դրանք համեմատվում են:

Յուրաքանչյուր դասարանում ուսումնասիրվելիք նյութի ծավալը և բովանդակությունը պայմանավորված են գոյական անվան առանձնահատկություններով, ինչպես նաև կրտսեր դպրոցականների տարիքային հնարավորություններով: Ուսուցման այս փուլում իրականացվում են՝

1. «գոյական անուն» քերականական հասկացության ձևավորումը,
2. Հարցի օգնությամբ գոյական անունները տարբերելու (նաև անձ և իր ցույց տվող) կարողության տիրապետումը (առանց անուններ տալու),
3. հատուկ անունները մեծատառով գրելու կարողության ձևավորումը (մարդկանց անունները, հայրանունները, ազգանունները, կենդանիներին տրվող անունները, քաղաքներին, գյուղերին, գետերին, ծովերին, սարերին տրվող անունները),
4. հարցերի միջոցով գոյական անունների թիվը որոշելու և այն փոփոխելու կարողությունների զարգացումը,
5. սովորողների բառապաշարի հարստացումը նոր գոյական անուններով,
6. բառերը վերլուծելու, համեմատելու և համակարգելու կարողությունների մշակումը,
7. խոսքում գոյականը՝ ըստ հոլովային նշանակության և համապատասխան վերջավորության ճիշտ գործածելու կարողության ձևավորումը:

Վերոհիշյալ խնդիրները լուծվում են շարունակականության սկզբունքով՝ յուրաքանչյուրի ուսումնասիրության ժամանակ առավել ուշադրություն դարձնելով դրանցից մեկին, դասարանից դասարան խորացնելով և ընդլայնելով գոյական անվան մասին երեխաների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները:

Որպեսզի երեխաներն ըմբռնեն խոսքի մասերի մասերի տարբերակման հիմնական սկզբունքները, անհրաժեշտ է նրանց սովորեցնել հարաբերակից խոսքի մասերի պատկանող բառերը դասդասել ըստ նշանակության՝ մշակելով դրանք քերականական հատկանիշներով համեմատելու, հակադրելու, նրանց միջև գոյություն ունեցող նմանություններն ու տարբերությունները տեսնելու ունակություններ:

Այս կարողությունների մշակման նպատակով անհրաժեշտ է աշակերտներին առաջարկել տրված բառերին տալ հարցեր, ապա դրանք խմբավորել ըստ տրված հարցերի: Այնուհետև դրանք գործածել խոսքում և համեմատել խոսքի մեջ դրանց նմանություններն ու տարբերությունները՝ ուշադրություն դարձնելով դրանց տարբերակիչ հիմնական քերականական հատկանիշներին: Այս մոտեցումն արդյունավետ կարող է լինել ածական-մակբայ, դերանուն-գոյական-ածական-թվական,

վերաբերական-շաղկապ, կապական բառ-գոյական և այլ հարաբերակից խոսքի մասերի պատկանող բառերն ըստ խոսքի մասային պատկանելության տարբերակելու խնդրի լուծման համար: Օրինակ, ավելի բարձր դասարաններում ուսուցիչը նշում է, որ **դերանունը** հարաբերակից է տարբեր խոսքի մասերի՝ գոյականին, ածականին, թվականին, մակբային: Սա դերանվան հատկանիշներից է, որի հիման վրա էլ այն մատնանշում է ընդհանրական առարկա կամ հատկանիշ՝ առանց որոշակիացնելու այն: Տվյալ դեպքում՝ դերանվան մատնացույց արած առարկան կամ հատկանիշը կարող է հարաբերակցվել մի դեպքում գոյականին, մեկ այլ դեպքում՝ ածականին, թվականին, մակբային: Սովորողները հասկանում են, որ դերանունը ձեռք է բերում այն խոսքի մասի քերականական հատկանիշները, որը ինքն է նշանակում: Մասնավորապես **այսպես, այդպես, այնպես** դերանուններն ունեն մակբայի խոսքիմասային իմաստ, գործածության մեջ փոխարինում են մակբայներին և ինչպես մակբայները, այնպես էլ այդ դերանունները չեն թեքվում. **այսպիսի, այդպիսի, այնպիսի** դերանունները ունեն ածականի խոսքիմասային իմաստ և նրա ձևավորման առանձնահատկությունները, այսինքն՝ եթե տվյալ լեզվում ածականները համաձայնում են գոյականի հետ, համաձայնում են նաև այդ դերանունները, իսկ եթե ածականը չի համաձայնում գոյականի հետ, ապա դրանք էլ չեն համաձայնում՝ ինչպես ժամանակակից հայերենում **այսպիսի, այդպիսի, այնպիսի՝** ածականների խոսքիմասային իմաստ ունեցող դերանունները չեն համաձայնում գոյականների հետ, քանի որ ածականները նույնպես չեն համաձայնում[4]:

Լինելով հարաբերակից նշված խոսքի մասերին՝ դերանունները վերջիններից տարբերվում են նրանով, որ առարկա կամ հատկանիշ են ցույց տալիս՝ առանց անվանելու: Հարցադրումների և պարզաբանումների օգնությամբ այնուհետև բերվում են համապատասխան օրինակներ, որոնք գործածվում են խոսքում և դրա հիման վրա կատարվում է ամփոփում, որ դերանվան, որպես խոսքի մասի, յուրահատկությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն տարբերությունը, որ գոյություն ունի նրա և նրան հարաբերակից խոսքի մասերի միջև:

Աշակերտները օրինակների վրա ցույց են տալիս, որ գոյականը, ածականը, թվականը անվանում են համապատասխանաբար առարկա, առարկայի որակային և հարաբերական ու թվային հատկանիշներ: Մակբայը թեև անուն չի համարվում, բայց նա ևս ունի անվանողական արժեք՝ անվանում է գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ: Մինչդեռ դերանունը չի անվանում ո՛չ առարկա, ո՛չ հատկանիշ, այլ նրան հատուկ է առավել ընդհանրական, չտարբերակված իմաստը:

[4] Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 365:

Այսինքն՝ դերանունները չունեն առարկայի կամ հատկանիշի անվանողական արժեք, այլ դրանք մատնացույց են անում հարաբերությամբ: Հենց հարաբերության հատկանիշն է, որ բնորոշ է բոլոր դերանուններին և կապվում է նրանց մյուս հատկանիշի՝ համընդհանուր իմաստի հետ: Նման համեմատականներով ուսուցումը կարող է առավել դյուրին դարձնել խոսքի մասերի ուսուցման և հարաբերակից խոսքի մասերը տարբերակելու ուսումնական գործընթացը: Տարբեր դերանուններ գործածելով խոսքի մեջ՝ աշակերտները հասկանում են, որ դերանունը խոսքից դուրս ունի չտարբերակված ընդհանուր իմաստ, իսկ խոսքի մեջ որոշակիանում է՝ մատնացույց անելով խոսքի մասնակիցներին արդեն հայտնի կամ նույն խոսքում նախապես հիշատակված առարկամ կամ հատկանիշը՝ փոխարինելով դրա անվանը: Ասվածն առավել ամրապնդելու նպատակով՝ ուսուցիչը գրատախտակին է փակցնում ցուցական դերանունների 4 խմբերը պատկերող ցուցանակ և նշում, որ բերված դերանունները խմբավորվում են նաև ըստ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցության.

Տարբերակում են այդպիսի 4 խումբ՝

- **Գոյականական՝** սա, դա, նա,
- **Ածականական՝** այս, այդ, այն, սույն, դույն, նույն, միևնույն, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի,
- **Թվականական՝** այսքան, այդքան, այնքան, նույնքան,
- **Մակբայական՝**
- **ձևի՝** այսպես, այդպես, այնպես, նույնպես,
- **չափի՝** այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ,
- **տեղի՝** այստեղ, այդտեղ, այնտեղ:

Դասարանը բաժանվում է երկու խմբի, խմբերից մեկին հանձնարարվում է բերված խմբերից ընտրել դերանուններ և դրանք գործածել նախադասություններում, իսկ մյուս խմբին՝ նախադասություններում գործածված այդ դերանունները փոխարինել հարաբերակից այլ խոսքի մասով: Ապա երկու խմբերում կատարված աշխատանքի արդյունքները համեմատվում են և կատարվում է ամփոփում:

Ածական անունն ուսումնասիրելիս երեխաներին տրվում են գիտելիքներ այն ամսին, թե որ բառերն են պատասխանում ինչպիսի՞, ո՞ր հարցերին: Նրանց առաջարկվում է գրել կամ թվարկել այդ հարցերին պատասխանող բառեր: Աշխաում ենք, որ ածականները բազմազան լինեն և հիշատակվեն գոյականների հետ՝ **կանաչ** բացատ, **քաղցր** միրգ, **երկաթյա** թուր, որտեղ պետք է հատկապես ընգծել ածականները: Որից հետո աշակերտները հեշտությամբ նշում են, որ ընդգծված

բառերն ածականներ են[5]: Ածականների ուսուցումն առավել արդյունավետ է, երբ կատարվում է երեխաներին արդեն ծանոթ այլ խոսքի մասերի, օրինակ՝ գոյականների հետ համեմատության հիման վրա: Ածական անունների ըմբռնումը շատ պարզ կլինի, եթե այն կապենք ածականների արտահայտած հիմնական իմաստի հետ: Ածականները բոլոր այն բառերն են, որոնք արտահայտում են առարկայի որպիսությունը, հատկացությունը, ինչպիսի լինելը, ինչից լինելը: Բերված օրինակներում ընդգծված կանաչ, քաղցր և երկաթյա բառերը ցույց ենտալիս հատկություն: Ձևաբանական տեսակետից շատ դյուրին է այս բոլոր բառերը ամփոփել ընդհանուր կարգի տակ:

Ածականների ուսումնասիրման համար գործադրվում է ինդուկտիվ մեթոդ. ուսուցիչը գրում է մի շարք բառեր, որքան կարելի է՝ իմաստով միմյանց մոտ: Դրանից հետո աշակերտներին առաջարկվում է պարզել, թե ինչ են ցույց տալիս այդ բառերը[6]: Ընտրվածները պետք է որակ ցույց տվող բառեր լինեն, որպեսզի աշակերտները հեշտությամբ ըմբռնեն ածականի էական հատկանիշները: Երբ աշակերտները պարզում են, որ այդ բառերը ցույց են տալիս որպիսություն, ուսուցիչը տալիս է ածականի սահմանումը: Ածականի ուսումնասիրումը ևս արդյունավետ է իրականացնել աբնույթ ուսուցողական վարությունների միջոցով:

Մյուս խոսքի մասերի ուսումնասիրման խնդիրները նույնպես լուծվում են հիմնականում վերը քննարկված մոտեցումներով:

---

[5] Ս.Վ. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 1978, էջ 193:
[6] Ա. Ս. *Ղարիբյան*, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Երևան, 1954, էջ 216-217:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով խոսքի մասերի ուսուցման և դրանց տարբերակման վերաբերյալ սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ձևաբանության, մասնավորապես՝ խոսքի մասերի ուսումնասիրության գործընթացում ուսուցչի գլխավոր խնդիրը պետք է լինի հասնել նրան, որ աշակերտները կարողանան բառերը միմյանցից տարբերել՝ ըստ նրանց հատկանշային, առարկայական, գործողության կամ վերաբերական ու քերականական իմաստային առանձնահատկությունների, այսինքն՝ հիմք պետք է դրվի, որպեսզի երեխաները կարողանան բառերը խմբավորել՝ ըստ այս կամ այն խոսքի մասին պատկանելության, որը հետագայում նրանց կօգնի հեշտությամբ որոշել տվյալ բառի խոսքի մասային պատկանելությունը և՛ ուղիղ, և՛ թեք ձևերում:
2. Հիմք պետք է ձևավորել նաև խոսքի տարբեր մասերի հիմնական հատկանիշների վերաբերյալ գիտելիքները յուրացնելու համար: Այս կամ այն խոսքի մասի տարբերակիչ յուրահատկությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն տարբերությունը, որ գոյություն ունի նրա և նրան հարաբերակից խոսքի մասերի միջև:
3. Խոսքի մասերի ուսուցման գործընթացն արդյունավետ կլինի, եթե ապահովվի տարրական և միջին դասարաններում ուսուցման շարունակականությունը:
4. Խոսքի մասերի ուսուցման և տարբերակման խնդրի կարգավորման հարցում մենք կարևորում ենք այնպիսի մեթոդների համակարգը, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի հաղորդում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և գործնական գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում, որոնողական, համագործակցային աշխատանքների կատարում, որին մեծապես նպաստում են փոխներգործուն մեթոդները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952:
2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկան, Երևան, 2018:
3. Аничкина Н.В. Актуальные вопросы изучения частей речи в школе. Русский язык и литература в мультикультурном пространстве. Комсомольск-на-Амуре. Том часть 2. 2017, с. 127-130.
4. Борисенко И.В., Смекалова Е.Н. Проблема Преемственности между начальной основной школой в изучении темы “Части речи”.Дошкольное и начальное образование: современные методические подходы. Международная конференция «Чтения Ушинского» педагогический факультет ЯГПУ. 2015, с. 213-217.